«ԱՐՄՕՅԼ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Դավթաշեն 2-րդ թղմ. 28/4
Հեռախոս +374 10 37 37 00
Ֆաքս +374 10 36 00 04
Էլ.փոստ info@armoil.am
sales@armoil.am
Վեբ-կայք www.armoil.am

ARMOIL
MORE THAN THE BEST

"ARMOIL" CJSC
Address: 28/4, 2nd Block, Davtashen, Yerevan
Tel: +374 10 37 37 00
Fax: +374 10 36 00 04
E-mail: info@armoil.am
sales@armoil.am
Website: www.armoil.am

Նաիրի համայնքի ղեկավար
Ն. Սարգսյանին
18 մարտի 2024թ.

Հարգելի պարոն Սարգսյան,

Հայտնում եմ Ձեզ, որ Կոտայքի մարզ Նաիրի համայնք ք. Եղվարդ Երևանյան խճուղի 129 հասցեում նախատեսում ենք շահագործման հանձնել բիտումի և քսայուղերի արտադրության գործարանը:

Դիմում ենք Ձեզ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի և ՀՀ Կառավարության 2015թ. նոյեմբերի 19-ի «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» N 1325-Ն որոշման հավելվածի համաձայն (առաջին փուլ) նախատեսվող գործունեության վերաբերյալ ծանուցման և հանրային քննարկում կազմակերպելու համար:

Խնդրում ենք Ձեր հանձնարարականը համաձայն նշված կարգի 14-րդ հոդվածի հինգ աշխատանքային օրվա ընթացքում շահագրգիռ հանրության ծանուցում իրականացնելու համար: Աջակցել և ապահովել մասնակցությունը հանրային քննարկումներին, դրանց արձանագրությունը, տեսաձայնագրությունը կամ լուսանկարները, ինչպես նաև արված առաջարկություններն ու դիտողությունները «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացնելու համար:

Կանխավ շնորհակալություն

«Արմօյլ» ՓԲԸ տնօրեն Ալֆրեդ Աբեդի

"ԱՐՄՕՅԼ"
"АРМОЙЛ"
"ARMOIL"
01259308

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆԱԻՐԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՄՏԻՑ ԹԻՎ 171-1054
«19» 03 2024թ.

Արձանագրություն թիվ – 01

19.04.2024թ. ք. Եղվարդ

<<Հանրության իրազեկման և հանրային լսումների ծանուցման բովանդակությունը, հանրային լսումների ընթացակարգը, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացում շահագրգիռ հանրության կարծիքների, դիտողությունների և առաջարկությունների ներկայացման տեղական ինքնակառավարման մարմինների կողմից նախնական համաձայնության կամ անհամաձայնության տրամադրման ընթացակարգը և ժամկետները սահմանելու մասին>> ՀՀ կառավարության 19.11.2014 թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգի համաձայն 2024 թվականի ապրիլի 19-ին, ժամը 11 ^{00} –ին Նաիրի համայնքի Եղվարդ քաղաքի արվեստի դպրոցում(ըստ նախապես տրված հայտարարության՝ հանրային լսումը պետք է անցկացվեր համայնքապետարանի նիստերի դահլիճում, սակայն մարդաշատ լինելու պատճառով տեղափոխվեց ավելի ընդարձակ դահլիճ), կայացավ << Արմոյլ>> ՓԲԸ-ի կողմից ներկայացված Կոտայքի մարզի Նաիրի համայնքի վարչական տարածքի՝ Երևանյան խճուղի 129 հասցեում նախատեսվող բիտումի և քսայուղերի արտադրություն կազմակերպելու նպատակով շրջակա միջավայրի վրա ազդեցության կապակցությամբ նախնական համաձայնություն կամ անհամաձայնություն տրամադրելու վերաբերյալ 1-ին հանրային լսումը:

Հանրային լսումը վարում էր համայնքի ղեկավարի կողմից իր իրավասությունների սահմաններում նշանակված լիազորված անձ՝ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Կարեն Հարությունյանը:

Կարեն Հարությունյանը իր ելույթում նշեց, որ համայնքում իրականացվում է տվյալ հարցի հետ կապված առաջին հանրային լսումը: Հորդորեց լսման մասնակիցներին լինել ակտիվ, ունենալ ելույթներ, տալ իրենց հետաքրքրող հարցերը:

Ելույթ ունեցան ՇՄԱԳ նախագծի ղեկավար Հովհաննես Նիկողոսյանը, << Արմոյլ>> ՓԲԸ-ի տնօրեն Ալֆրեդ Աբեղին, նույն ընկերության ներկայացուցիչ Արայիկ Քեսոյանը, <<Ռիվալ>> ՍՊԸ-ի տնօրեն Արամ Ղազարյանը, նույն ընկերության ներկայացուցիչ Միեր Շահնազարյանը, շահագրգիռ անձեր ներկայացած Սեյրան Սաֆարյանը, Աշոտ Ազիզյանը, Արմեն Սարգսյանը, Վահագն Սարգսյանը, Լևոն Հարությունյանը, Տիգրան Մուրադյանը, Վարդուհի Մաթևոսյանը և Պետրոս Ստեփանյանը:

Որոշեցին՝ գործող կարգի համաձայն, սույն հանրային քննարկման ընթացքում կազմված արձանագրությունը, տեսաձայնագրությունը 5-օրյա ժամկետում ներկայացնել համայնքի ավագանուն և նախաձեռնողին:

Հանրային լսումն իրականացնող լիազորված անձ՝ **Կ. Հարությունյան**

<<Արմոյլ>> ՓԲԸ-ի տնօրեն՝ **Ալֆրեդ Աբեղի**

Արձանագրող՝ **Ն. Արշակյան**